

**ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ**

Գ. Կ. ՀԱՆԱՆՑԱՆ

Ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, Սվեդիայի բարբառի Խորհրդի խոսվածքում ևս բայը ձևաբանորեն նշույթավորված խոսքի մաս է: Հանդես է գալիս դիմավոր և անդեմ ձևերով: Անդեմ ձևերը յոթն են՝ անորոշ, ընթացակցական, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտական դերբայները: Դիմավոր ձևերն են սահմանական, ըղձական, պատմողական և հրամայական եղանակները:

Անդեմ ձևերը բնութագրվում են միայն սեռի, իսկ դիմաեղանակային ձևվերը՝ նաև դեմքի, թվի, եղանակի ու ժամանակի քերականական կարգերով:

Առկա են բայական հինգ լծորդություններ՝ ի, ու, է, օու, էու, որոնք հին հայերենյան ձևերի բարբառային համապատասխանություններն են: Որոշ դեպքերում նկատելի են լծորդությունների փոխանցումներ: Հին ու լծորդությունը գրեթե ամբողջապես տարրալուծված է մյուսների մեջ (մնացել են միայն թողում, լնում, թֆնում՝ բարբառային թուղօում, լրննէում, թուֆնէում համապատասխանություններով):

Եղանակային հակադրությունն արտահայտվում է նախամասնիկների, իսկ թվային, դիմային ու ժամանակային հակադրությունները՝ վերջավորությունների և հիմքակազմ ածանցների միջոցով:

Միօրինակացված է կրավորականի կազմությունը բայական բոլոր հարացույցներում. բացի համապատասխան վերջավորություններից, կրավորականի սեռային հակադրությունը դրսևորվում է նաև վ ածանցի միջոցով: Մի շարք դեպքերում պահպանվել է լծորդության փոփոխությամբ (ի/է) սեռային հակադրության արտահայտությունը, ինչպես՝ խիսսիմ/խիսսէմ, թըմմիմ/թըմմէմ և այլն:

Խոսվածքը վերացրել է բայերի միավանկությունը՝ (գալ, լալ, տալ) բայերի սկզբում ավելացնելով ու աճականը (ուկում, ուլում, ուղում):

Ա. ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Խոսվածքում բայը հանդես է գալիս երեք հիմքով՝ ներկայի, կատարյալի, դերբայական:

Բայական հիմք պսելով նկատի է առնվում այն ձևը, որին պսելանում են բայական տվյալ հարացույցի վերջավորութունները:

Հիմքերը լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ հիմքերը զուրկ են հիմքային ձևույթներից, իսկ բաղադրյալ հիմքերն հանդես են գալիս (ա, ան, ը, ի)ն, ն, (ա, ան, ը, ի)ծ, ծ, ր ձևույթներով: Սրանցից ն-ի խումբը գործառու է ներկայի, իսկ Մ-ի խումբը և Բ-ն՝ միայն կատարյալի հիմքերում:

Խոնարհման համակարգում գործառու են միայն ներկայի ու կատարյալի հիմքերը:

Դերբայական հիմքը աճուռոջն է, որն հանդես է գալիս ապառնի և ընթացակցական դերբայներում:

Կատարյալի հիմքը լինում է պարզ կամ առմատական, ցոյական և ճերթագայական: Պարզ կամ արմատական հիմքը կազմվում է է և Ի խոնարհման ածանցավոր և ՕՈՒ, էՈՒ խոնարհման բոլոր բայերից՝ ներկայի հիմքային ածանցների սղումով: Այսպես. Փնիս-ն(էմ) > փնիս-(ու), հնս-ն(էմ) > հնսս-(ու), առ-ն(իմ) > առ-(ա), իճ-ն(էմ) > իճ-(ու), դրս-ն(էում) > դրս-(ու), ղրն-ն(օում) > ղրդ(ու) և այլն:

Կատարյալի ցոյական հիմք ունեն Ի և է խոնարհման պարզ և ՈՒ խոնարհման բոլոր բայերը: Պարզ բայերի կատարյալի հիմքում հանդես են գալիս իծ, ած և ծ ածանցները: Այսպես. կըր-(իմ) > կըր-իծ(ա), խուս-(էմ) > խուս-իծ(ու), գարտ-(ում) > գարտ-ած(ա), խնդ-(ում) > խնդ-ծ(ա) և այլն: Ածանցավոր բայերի ն-ի խումբը հերթագայվում է Մ-ի խմբով: Այսպես. վնիս-ն(ում) > վնիս-ծ(ու), կնու-ն(ում) > կնու-ծ(ու)...

Կատարյալի հերթագայական հիմք ունեն ին-(իմ) / իր-(ա), աըն-(իմ) տըր-(ա), պառն-(ում), պարծ-(ա), տառն-(ում) / տարծ-(ու) բայերը:

Ներկայի հիմքից կազմվում են՝ սահմանականի ներկա, անցյալ անկատար, ապառնի / ըղձականի ապառնի և անցյալ, արգելական հրամայական և է, ի, ու խոնարհման պարզ բայերի բուն հրամայականի եզակի թվի բայաձևերը, ինչպես նաև՝ աճուռոջ, ի, է, օու խոնարհման բոլոր բայերի եթականական և ժխտական, ի, է, օու խոնարհման պարզ բայերի վաղակատար և հարակատար դերբայները:

Կատարյալի հիմքից կազմվում են սահմանականի անցյալ կատարյալ, բուն հրամայականի հոգնակի բայաձևերը, ինչպես նաև՝ ի, է, էու խոնարհման ածանցավոր և ու խոնարհման բոլոր, օու, էու, ի, է խոնարհումների պարզ բայերի եթականական, ածանցավոր բոլոր բայերի հարակատար և վաղակատար դերբայները:

Դերբայական հիմքից կազմվում են ընթացակցական (կըրըլնիկան, գարտըլնիկան, խուսըլնիկան, ուղըլնիկան, դըվըլնիկան...) և ապառնի (կրիա, գարտիա, խոսիա, ուղիա, դըվիա...) դերբայները:

Ընթացակցական դերբայի կազմութայն ժամանակ անորոշի ի-ն. շեշտակորույս լինելով, հերթագայվում է ր-ով:

Խոսվածքի հիմքակազմութայնը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով:

Կանոնավոր բաղադրյալների կազմակերպումներ

Ներկայից ընդհանրություն	Կատարողի հիմք			Կատարողի վերջավորություններ		Հրամայական		Օրինակներ
	Կատարողի արձան- տա- կան	Գոյա- կան	Գրական հիմք	Ներգործակերպ	Նրավորակերպ	Եզակի	Ռոգնակի	
Է	պարս	-	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	խուս-ի	խուս-իծ-ըկ	խուսեմ, թափքեմ
	ստիկան	+	-	-	ս, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	հանգ-է	հանգ-ըկ	հանգեմ, աճեմ
	պատճառ	-	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	խուս-ըծ-է ու աճողոր-վ-ի	խուս-ըծ-ուծ-ըկ աճողոր-վ-իծ-ըկ	խուսեցեմ, հանկեցեմ աճողորեմ, ծիտեցեմ
	կրտսերակ	-	+	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	կըր-ի	կըր-իծ-ըկ	կըրեմ, սիրեմ
Ի	ստիկան	+	-	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	ո՛ւր, ըրկ	առ-ըկ, թանկ-ըկ	առեմ, թանկեմ
	պատճառ	-	+	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	կըր-ըծ-է ու	կըր-ըծ-ամ-ըկ	կըրեցեմ, սիրեցեմ
	կրտսերակ	-	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	կըր-վ-ի	կըր-վ-իծ-ըկ	կըրվեմ, սիրվեմ
	պարս	-	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	գարտ-ո՛ւ	գարտ-ամ-ըկ	գարտեմ, խաղտեմ
ՈՒ	ստիկան	+	+	-	ու, ուր, ափ, ուն	հիվըն-ծ-է	հիվըն-ծ-ըկ	հիվընեմ, ճողընեմ
	պատճառ	-	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	գարտ-ամ-ու	գարտ-ամ-ուծ-ըկ	գարտեցեմ, խաղեցեմ
	կրտսերակ	+	-	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	գարտ-ամ-վ-ի	գարտ-ամ-վ-իծ-ըկ	գարտեցվեմ, խաղեցվեմ
	պարս	+	-	-	-	թող	թող-ըկ	թողում
ՕՄԻ	ստիկան	+	+	-	ու, ուր, ու (վ) ընկ, ափ, ուն	գո՛րծ	գըր-ըկ	գըրնում
	պատճառակ	-	+	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	թողըծ-ու	թող-ըծ-ամ-ըկ	թաղըցեմ, գըրնըցեմ
	կրտսերակ	-	+	-	-	թողըն-ըվ-ի	թողըն-ըվ-իծ-ըկ	թողըցվեմ, գըրնըցվեմ
	պարս	+	-	-	-	-	-	-
ԷՄԻ	ստիկան	+	-	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	թա՛կ	թակ-ըկ	թակնում
	պատճառակ	-	+	-	ա, իր, թ, ընկ, ափ, էն	թուկ-ըծ-է ու	թուկ-ըծ-ուծ-ըկ	թուկըցեմ (ճակ՝ թուկըցեմ)
	կրտսերակ	-	-	-	-	-	-	-
	պարս	-	-	-	-	-	-	-

Աղյուսակից երևում է, որ խոսվածքի է և ի լծորդության բայական պարզ հիմքերը և ու լծորդությունն ամբողջությամբ կատարյալի ցոյական հիմք ունեն, իսկ ածանցավորները (նաև՝ պատճառականներն ու կրավորականները) և օու լծորդությունն ամբողջությամբ՝ արմատական: Էու լծորդության պարզ բայեր խոսվածքը շունի (այս լծորդությամբ ավանդված են միայն երեք բայ՝ բուկնէում, դրսնէում, լրննէում, բոլորն էլ՝ ածանցավոր կազմությամբ):

Է լծորդությունն ամբողջությամբ ստանում է կրավորականի, Ի լծորդությունը՝ ներգործականի վերջավորություններ:

Ու, օու լծորդությունների պարզ բայերը և էու լծորդության բուկնէում-ը և լրննէում-ը խոնարհվում են ներգործակերպ, ածանցավորներ՝ կրավորակերպ:

Բազմապատկական բայերը հիմքակազմությամբ համարժեք են պարզ բայերին, այդ պատճառով աղյուսակում դրանք չեն ընդգրկվել:

Կրավորական բոլոր բայերը է լծորդության են և ստանում են կրավորակերպ վերջավորություններ: Պատճառական բոլոր բայերը ի լծորդության են և ստանում են ներգործակերպ վերջավորություններ: Աղյուսակում բոլոր լծորդությունների մեջ դրանց տեղակայումը պայմանական է և արված է՝ ընդգծելու համար այդ ձևերի խիստ կանոնականությունը և դրանց զուգորդելիությունը վերջավորությունների որոշակի խմբի հետ:

Ներգործական բոլոր բայերը ըստ անհրաժեշտության կարող են խոնարհվել նաև կրավորակերպ (այս դեպքում տեղի է ունենում լծորդության փոխանցում):

Խոսվածքի հիմքակազմությունը տիպաբանորեն հիմնականում դրսևորում է հին հայերենյան օրինաչափություններ:

Բ. ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բայական հարադրությունները խոսվածքում ևս դրսևորում են ընդհանուր հայերենյան օրինաչափություններ: Գերակշռում են զուտ բայական հարադրությունները: Զևաբանական փոփոխությունների կրողը հարադրության վերջին բաղադրիչն է:

Համակարգային քննության համար առավել կարևոր է համադրական բաղադրությունների քննությունը: Դրանք հանդես են գալիս երկու հիմքով՝ պարզ, որը վերջավորությունից առաջ բայական իմաստներ արտահայտող և խոնարհման հիմքերի հակադրություններ ստեղծող ածանցներ շունի և բաղադրյալ, որը ունի իմաստային ու գործառական տարբեր արժեքների ածանցներ: Այդ ածանցները լինում են հիմնական, սեռային-բերականակա և կերպային-բառակազմակա:

1. Հիմնական ածանցներն են՝ (ը, ա, ան, ի) ն, ն (ը, ա, ան, ի) ծ, ծ, ր: Ն-ի խումբը հանդես է գալիս ներկայի և դերբայական, իսկ ծ-ի խումբը և ր-ն՝ կատարյալի հիմքում:

Ն-ն կենսունակ ածանց է. այն ածականներից կազմում է վերածության-դառնալիության բայեր: Այս ածանցով կազմվում են միայն ու լծորդության անանցողական բայեր: Այսպես, սիվ-ն-ու(մ). սև դառնալ, հիվըն-ն-ու(մ). հիվանդ դառնալ, բըզզը-ն-ու(մ). պստիկ դառնալ, մինձան-ն-ու(մ). մեծ դառնալ և այլն:

Վերածության-դառնալիության բայերում Ն-ի լծորդը կատարյալի հիմքում ծ-ն է, այլ կերպ՝ Ն ածանցը կատարյալի հիմքում հերթագայվում է ծ-ով: Այսպես. կիդան-ն- / կիդան-ծ-, բըզզը-ն- / բըզզը-ծ- ...

Ն/ծ հիմքակազմ հերթագայություն ունեն նաև տառնիլ, պառնիլ, ուսնիլ,

լրենիլ բայերը: Այսպես. տառ-ն-/տար-ծ-, պառ-ն-/պար-ծ-, ուս-ն-/ուս-ծ-, լրն-ն-/լր-ծծ-:

Մ-ն, իբրև հիմքակազմ ձևույթ, հանդես է գալիս նաև է, ի, ու լծորդու-թյունների պարզ բայերի կատարյալում: Այսպես, կրրի-/կրրիծ-, գարտու-/գարտու-ծ-, խուսէ-/խուս-իծ- և այլն:

Այսպիսով, այս ձևերում ունենք հիմքակազմ ձևույթների Յ/ծ հերթագա-յություն:

Ն/ր հերթագայությունը գործառում է միայն դանիլ, տրնիլ, ինիլ բայե-րում: Այսպես. դան-/դար-, տրն/տրր-, ին/իր-:

2. Սեռային-ֆեռականական ածանցներն են՝ Վ, Մ: Վ ածանցով կազմվում է կրավորական սեռը: Այն դրվում է ի, էու, օու խոնարհման անցողական բա-յերի ներկայի, ու խոնարհման՝ կատարյալի հիմքերին: Վ-ի հավելումով տե-ղի է ունենում լծորդության փոխանցում. բոլոր լծորդությունների բայերն անցնում են է-ի: Այսպես. կրրիմ-կրրվէմ, գարտում-գարտածվէմ, դրսնէում-դրսնրվէմ, ղրննօում-ղրննվէմ:

Կրավորական բայերի հիմքերի հակադրությունն ստեղծվում է Յ/իծ հեր-թագայությամբ: Այսպես. կրրվ-/կրրվ-իծ-, գարտածվ-/գարտած-իծ-, դրս-նրվ-/դրսնրվ-իծ-, ղրննրվ-/ղրննրվ-իծ-:

Մ-ն ունի ածանցող արժեք, այսինքն՝ բայական առկա ձևերից սերում, կազմում է նոր բայաձևեր՝ քերականական նոր իմաստներով:

Այն ոչ անցողական (չեզոք) բայերից կազմում է անցողական բայեր՝ ներգործական-կրավորական սեռային հակադրության պոտենցիալ հնարավոր-ությամբ, անցողական բայերից՝ պատճառական բայեր:

Վերցնենք բայերի հետևյալ խմբերը.

չեզոք	պատճառական-ներգործական	պատճառական-կրավորական
փանխ-իլ	փանխ-ծը-ն-իլ	փանխ-ծը-վ-իլ
թըռռ-իլ	թըռռ-ծը-ն-իլ	թըռռ-ծը-վ-իլ
վանզզ-իլ	վանզզ-ըծ-ն-իլ	վանզզ-ըծ-վ-իլ
ճուղն-իլ	ճուղ-ծը-ն-իլ	ճուղ-ծը-վ-իլ
սիվ-ն-իլ	սիվ-ծը-ն-իլ	սիվ-ծը-վ-իլ

Այս երեք խմբերի դիտարկումից նկատում ենք, որ բայական-քերակա-նական իմաստների հակադրություն առաջացնում են Յ(զրո), (ը(ծ)ը) և Վ մասնիկները: Սրանց կատարյալի հիմքերն ունեն հետևյալ արտահայտություն-ները.

չեզոք	պատճառ. ներգ.	պատճառ. կրավորական
փանխ-(ու)	փանխ-ծ-ուծ-(ա)	փանխ-ծը-վ-իծ-(ու)
թըռռ-(ու)	թըռռ-ծ-ուց-(ա)	թըռռ-ծը-վ-իծ-(ու)
վանզզ-իծ-(ա)	վանզզ-ըծ-ուծ-(ա)	վանզզ-ըծ-վ-իծ-(ու)
ճուղ-ծ-(ու)	ճուղ-ծ-ուծ-(ա)	ճուղ-ծը-վ-իծ-(ու)
սիվ-ծ-(ու)	սիվ-ծ-ուծ-(ա)	սիվ-ծը-վ-իծ-(ու)

Փակագծերում նշված մասնիկները դիմաթվանիչ ձևույթներն են:

Այս խմբերում ձևաիմաստային հակադրություններ առաջացնում են Յ, ուծ, վ, իծ ձևույթները: Սրանցից ծ-ն հանդես է գալիս պատճառական բայերի և՛ ներկայի, և՛ կատարյալի հիմքերում, ուծ-ը՝ պատճառական բայերի ներ-գործականի կատարյալի հիմքում, վ-ն՝ պատճառական բայերի կրավորականի և՛ ներկայի, և՛ կատարյալի հիմքերում, իծ-ը՝ միայն պատճառական-կրավոր-ականի կատարյալի հիմքում:

Այսպիսով՝ (ը(ծ)ը) ածանցի առկայություն-բացակայությունը չեզոք բա-

յերի աննշույթ հիմույթներում արտահայտում է անցողական-ոչ անցողական իմաստային հակադրությունը: Այսպիսի ձևերում (ը(ծ)ը)-ն սեռանիշ արժեք ունի:

Քանի որ անցողականություն-անանցողականությունը իմաստային հակադրություն է, որն ավելի որոշակիանում է շարահյուսական մակարդակում, ուստի (ը(ծ)ը)-ն ունի նաև բառակազմական արժեք, սերում է նոր իմաստ՝ բայական-քերականական նոր հատկանիշով:

Անցողական բայերի աննշույթ հիմույթներում արդեն (ա-ը(ծ)ը)-ն առաջացնում է բուն պատճառականություն, այսինքն՝ քերականական ենթական ստիպում է, որ տրամաբանական ենթական ենթարկվի բայիմաստով արտահայտված գործողությանը:

Այսպիսով, անցողական բայերի պատճառականում առկա է կրկնակի անցողականություն: Հիմքային հակադրությունը ստեղծվում է ն/ուծ, իսկ սը-րանց կրավորական ձևերում՝ Յ/իծ հերթագայություններով:

Հայտնի է, որ հին հայերենում պատճառականության ցուցիչն էր ոյց, որը ներկայի հիմքում հանդես էր գալիս –ան ածանցի հետ: Անշեշտ դիրքում վերածվում էր –ուց-ի: Գրվում էր կատարյալի հիմքի վրա:

Խոսվածքում պատճառականի (ը(ծ)ը)-ն դրվում է անմիջապես բայական հիմույթի վրա, որին հաջորդում են քերականական մյուս բոլոր ածանցները (և՛ սեռանիշ, և՛ հիմքակազմ): Այն հաջորդում է միայն բուն կերպային-բառակազմական ածանցներին: Այսպես, թըռո-ըղ-ըծ-ն-(իլ), ջիտ-ըող-ըծ-ն-(իլ) և այլն: Սա նշանակում է, որ այն ունի հիմնականում բառակազմական, չեղոք (անանցողական) բայերից կազմված ձևերում՝ նաև սեռային-քերականական արժեք: Պատճառականի (ը(ծ)ը) ածանցը, այսպիսով, ձևաբանորեն բազմիմաստ ձևույթ է: Այն ունի և՛ սեռանիշ, և՛ բառակազմական արժեք:

Կրավորականի վ-ն հաջորդում է պատճառականի (ը(ծ)ը)-ին, իսկ պատճառականը կազմվում է կատարյալի հիմքից պարծ-ըծ-ն-(իլ), տարծ-ըծ-ն-վում է, ինչպես արդեն վերը նշվել է, Յ/իծ հերթագայությամբ:

Ինիլ (<անել<առնել), տրնիլ (<դնել), դանիլ (<տանել) բայերի պատճառականում առկա են կրկնակ հիմքակազմիչներ: Այսպես. ի-ն-ըծ-ն-, տը-ն-ըծ-ն-, դան-ն-ըծ-ն- (ներկայի հիմք), ի-ր-ըծ-ուծ-, տը-ր-ըծ-ուծ-, դան-ր-ըծ-ուծ- (կատարյալի հիմք): Երկու հիմքերի հակադրությունն արտահայտվում է ն/ր և ն/ուծ հերթագայություններով:

Պառնիլ (<բառնալ), տառնիլ (<դառնալ), ուլիլ (<լալ) բայերի պատճառականը կազմվում է կատարյալի հիմքից (պարծ-ըծ-ն-(իլ), տարծ-ըծ-ն-(իլ), լանծ-ծը-ն-(իլ), կատարյալի հիմքը՝ պարծ-ըծ-ուծ-(ա), տարծ-ըծ-ուծ-(ա), լանծ-ծ-ուծ-(ա):

3. Կերպային-բառակազմական ածանցներն են՝

ա) Բազմապատկական՝ -(ը(դ)ը), -ըրդ, -ըրդվ, -գրրդ:

բ) վերածման-դառնալիություն՝ -րբ:

Կերպային բառակազմական ածանցները դրվում են անմիջապես բայական հիմույթի* վրա: Այսպես, խանծ-իլ/խանծ-ըղ-իլ, թըռո-իլ/թըռո-ըղ-իլ, գըրդ-իլ/գըրդ-ըղ-իլ, բուհըղ-իլ/բուհըղ-ըղ-իլ (նաև բուհըղ-ըղ-իլ), բանկ-իլ/բանկ-ըղ-իլ (նաև՝ բանկ-ըղ-իլ), քիշ-իլ/քիշ-գրրդ-իլ, գիխ-իլ/գիխ-ըրդ-իլ, գինծ-իլ/գինծ-ըրդ-իլ, ջեուղ/ջըղ-ըր-իլ, քուր/քար-ըր-իլ, հենդ/հընդ-ըր-իլ...

Ի տարբերություն բազմապատկական ածանցների, վերածման-դառնալիության -րբ- ածանցը բայական հիմքեր է կազմում ոչ թե արդեն առկա հի-

* Հիմույթը հասկացության տակ նկատի է առնվում բայական բառահիմքը:

մուլթներին, այլ՝ գոյական անուններին: Այս -ըբ-ը թերևս անել > լինիլ բայի կատարյալի ար > ըբ արմատն է՝ հնչյունափոխված տարբերակով քարացած իբրև սերող, ածանցող ձևույթ: Այն զուտ բարբառային գոյացություն է:

Վերածման-դառնալիության ածանցի արժեք ունի նաև ներկայի հիմքակազմ ն-ն, որի մասին խոսվել է հիմքակազմության մեջ: Այն բայեր է կազմում հիմնականում ածական անուններին: Այսպես, հիվունդ—հիվըննիլ, ձուն—դըր—ձանդըրնիլ, ցուծ—ցածնիլ, մինծ—մինծանիլ, խիլըկ—խըլըկնիլ...

Բայակազմության այս ձևն էլ է բավական կենսունակ խոսվածքում:

-ըբ-ով բայերը խմբավորվում են ի, (ը, ա) ն-ով բայերը՝ ու լծորդություններին մեջ:

Պատճառական (ը(ծ)ը) ածանցը հաջորդում է բուն կերպանիշ բազմապատկական և վերածման-դառնալիության ածանցներին, իսկ կրավորականն էլ՝ վերջիններին:

Հիմքակազմ ածանցները դրվում են բոլոր կարգի ածանցներից հետո, որոնց վրա էլ ավելանում են բայական վերջավորությունները:

Այսպիսով, խոսվածքի բայակազմական համակարգում գործում են հետևյալ ձևատիպարները (մոդելները).

ա) հիմույթ+վերջավորություն (կրր+իլ, գարտ+իլ)

բ) հիմույթ+հիմքակազմ ածանց+վերջավորություն (դըս+ն+իլ, սիվ+ն+իլ)

գ) հիմույթ+կերպածանց+վերջավորություն (թըռռ+ըդ+իլ, քար+ըր+իլ)

դ) հիմույթ+հիմքակազմ+սեռանիշ+վերջավորություն (դըս+նը+վ+իլ, ղըն+նը+վ+իլ)

ե) հիմույթ+պատճառական ածանց+հիմքակազմ ածանց+վերջավորություն (սիվ+ծը+ն+իլ, հնկ+ծը+ն+իլ)

զ) հիմույթ+կերպածանց+պատճառական ածանց+հիմքակազմ ածանց+վերջավորություն (թըռռ+ըդ+ըծ+ն+իլ, քար+ըր+ըծ+ն+իլ)

է) հիմույթ+կերպածանց+պատճառական ածանց+հիմքակազմ ածանց+սեռանիշ+վերջավորություն (թըռռ+ըդ+ըծ+նը+վ+իլ, քար+ըր+ըծ+նը+վ+իլ)

ը) հիմույթ+կերպածանց+պատճառական ածանց+հիմքակազմ ածանց+սեռանիշ+հիմքակազմ ածանց+վերջավորություն (թըռռ+ըդ+ըծ+նը+վ+իծ+ու, քար+ըր+ըծ+նը+վ+իծ+ու)

Խոսվածքում հնարավոր են ձևաբանական երկուսից մինչև յոթ միավորներից բաղադրված ձևատիպարներ:

Գ. Ս Ե Ռ

Բայական սեռ հասկացության տակ նկատի է առնվում այն կապը, հարաբերությունը, որ կա գործողության իրական ենթակայի (տրամաբանական սուբյեկտի) և գործողության առարկաների (տրամաբանական օբյեկտի) միջև: Քերականական այս կարգը խոսվածքում ևս արտահայտվում է ներգործական-կրավորական հակադրությամբ, որի ցուցիչն է Վ ածանցի առկայությունբացակայությունը:

Բային, իբրև գործողություն, եղելություն արտահայտող լեզվական միավորի, հատուկ է նաև մի այնպիսի հատկանիշ, որով դրսևորվում է գործողության ենթակայության սահմանները: Ըստ այդ հատկանիշի բայերը լինում են անցողակաճ և անանցողակաճ: Անցողական բայերում գործողությունը տրամաբանական ենթակայի՝ սուբյեկտի սահմաններից դուրս է գալիս և ընդ-

գրկում այլ առարկաների ոլորտներ: Անանցողական բայերի արտահայտած գործողությունը սահմանափակվում է միայն տրամաբանական ենթակայի ոլորտում: Քերականական այս իմաստները ձևաբանորեն շնչույթավորված բայերում ավելի որոշակիացվում են շարահյուսական մակարդակում:

Անցողական-անանցողական քերականական հակադրությունը խոսվածքում դրսևորվում է համապատասխան դիմաթվանիշ ձևույթների միջոցով: Այսպես. ազադիմ—ազադէմ, իպիմ—իպէմ, խախտիմ—խախտէմ (ազատեմ—ազատվեմ, եփեմ—եփվեմ, խեղդեմ—խեղդվեմ) և այլն:

Անցողական բայերն ունեն ներգործական-կրավորական սեռային հակադրություն, անանցողական բոլոր բայերը հանդես են գալիս իբրև շեզոք սեռի բայեր:

Առկա են սեռային և՛ երկանդամ՝ շեզոք-ներգործական, ներգործական-կրավորական, և՛ եռանդամ՝ ներգործական-կրավորական-շեզոք հակադրություններ: Սեռային հակադրությունը անդամ ձևերում արտահայտվում է սեռանիշ Վ և Մ ածանցների միոցով, դիմավոր ձևերում՝ նաև լծորդության փոփոխությամբ դիմաթվանիշ վերջավորություններով:

Վ-ն մի կողմից ստեղծում է ներգործական-կրավորական (գարտիլ-գարտածվիլ, կըրիլ-կըրվիլ), մյուս կողմից՝ ներգործական-շեզոք (ջըրգըդիլ—ջըրգըդվիլ, ձիրըրիլ—ձիրըրվիլ, փնւրջըդիլ—փնւրջըդվիլ) սեռային հակադրություններ:

Յռանդամ հակադրությունը, սակայն, համակարգային բնույթ չի կրում և ներկայանում է միայն մի քանի բայերի սահմաններում: Այդ բայերից են՝

ներգործական	կրավորական	շեզոք
ազադիմ	ազադվէմ	ազադէմ
խանձիմ	խանձըվէմ	խանձէմ
արձիմ	—	արձէմ
կըլդուրիմ	կըլդուրվէմ	կըլդուրէմ
իպիմ	իպվէմ	իպէմ
տըրճիմ	տըրճըվէմ	տըրճէմ
խիշիմ	խիշվէմ	խիշէմ
խանվարիմ	—	խանվարէմ

Հարկ է նշել, որ այս բայերի կրավորական ու շեզոք ձևերի սեռային հակադրությունը հաճախ շեզոքանում է և մնում է միայն անցողական-անանցողական հակադրությունը, երբեմն՝ վ ցուցիչով, երբեմն՝ առանց դրա:

Արձիլ (արածել) և խանվարիլ (խավարել) բայերի ներգործականն ունի պատճառականի իմաստ. արձիմ (արածեցնում եմ), խանվարիմ (խավարեցնում եմ):

Խոսվածքի սեռակազմությունն, այսպիսով, դրսևորում է միաժամանակ և հին՝ գրաբարյան, և նոր օրինաչափություններ:

Г. ГАНАНЫН — Некоторые особенности глагольной системы сведийского диалекта. — Исследование некоторых формообразовательных особенностей системы глагола приводит к заключению, что в сведийском диалекте продолжают действовать многие явления системы древнеармянского (типы спряжений, фактические совпадения окончаний лица и числа), а также получают применение новые явления (аффиксация страдательного, префиксация модальности и т.д.). Глагольное основообразование типологически в основном представляет диалектное соответствие закономерностям древнеармянского.